«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ինտեգրված պարապմունքների կազմակերպումը՝ կարողունակահեն կրթական մոտեցման համատեքստում

Դաստիարակ՝ Ղարիբյան Արմինե
Մանկապարտեզ՝ «Ալափարսի մ/մ » ՀՈԱԿ

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
ԳԼՈՒԽ 1 5
ԻՆՉ Է ԻՆՏԵԳՐՈՒՄԸ 5
1.1 Ինտեգրված ուսուցում 5
1.2 Ինտեգրված պարապմունք 7
1.3 Ինտեգրված պարապմունքի պլանավորման մեթոդիկա 7
1.4 Ինտեգրված պարապմունքի կազմակերպումը տարատարիք խմբում 10
Գլուխ 2 12
Գործնական մաս 12
Եզրակացություն 18
Գրականության ցանկ 19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակի պահանջները նախադպրոցական կրթական ոլորտի աշխատողներին ստիպում են փնտրել նոր մեթոդներ կրթելու և ինֆորմացիա հաղորդելու համար: Դա պայմանավորված է անհատական մոտեցման պահանջով, ինչը թույլ է տալիս անհատապես պարզել յուրաքանչյուր երեխայի հետաքրքրությունները, կարողությունները, ստեղծագործական հմտությունները: Այդ պահանջները բավարարելու գործընթացներից մեկը ինտեգրված պարապմունքների անցկացումն է մանկապարտեզներում: Իսկ ի՞նչ է իրենից ներկայացնում ինտեգրված պարապմունքը:Դա պարապմունքի տեսակ է, որն ուղղված է ինչ-որ կոնկրետ թեմայի ամբողջական բացահայտմանը և չի սահմանափակվում մեկ առանձին ոլորտով:Ինտեգրված պարապմունքները որևէ կոնկրետ թեմա, երևույթ ուսումնասիրելու ընթացքում կարևորում են գործունեության այն ձևերը, որոնք պահանջում են ինքնուրույն մտածողություն, նախաձեռնություն, համագործակցություն, հնարամտություն, անձնական կարգապահություն, շրջապատում կատարվող փոփոխությունների ճիշտ ընկալում:Երեխային պետք է հնարավորություն տալ ինքնուրույն բացահայտել այն ինչ ցանկանում եք, որ նա այդ պահին սովորի, այլ ոչ թե մատուցել պատրաստի:Այստեղ հարկ է նշել Ժ. Պիաժենի խոսքերը. « Երեխային ինչ-որ բան սովորեցնելիս, դուք նրան զրկում եք ինքնուրույն բացահայտելու կարողությունից »: Այսինքն անհրաժեշտ է կիրառել ուսուցման ակտիվ մեթոդներ, որոնց նպատակն է «Սովորեցնել սովորել »:

Ինտեգրված պարապմունքի ընթացքում կարելի է ինտեգրել մանկավարժական գործընթացի ցանկացած բաղադրիչ՝ նպատակ, բովանդակություն, ուսուցման մեթոդ և միջոց:Տարբեր է նաև ինտեգրված պարապմունքի տևողությունը՝ առավելաբար օգտագործվում են երկու կամ երեք պարապմունքի ժամ՝ միավորված մեկ պարապմունքի մեջ: Ցանկացած ինտեգրված պարապմունք նպատակ ունի դուրս գալու մեկ առարկայի նեղ շրջանակներից: Ինտեգրված պարապմունքը ուղղված է որոշակի թեմայի ամբողջական բացահայտմանը գործունեության տարբեր ձևերի կիրառմամբ՝ խաղ, աշխատանքային գործունեություն, կերպարվեստային գործունեություն և այլ պարապմունքներ:

Ինտեգրված պարապմունքի կառուցվածքային կողմը պահանջում է նյութի հստակություն և տարբեր մեթոդիկաների միջև տրամաբանական կապի ապահովում: Դա կարող է իրականացվել պարապմունքի ընթացքում ինտերակտիվ մեթոդների և ժամանակակից մեթոդների կիրառմամբ:

Հետազոտության նպատակն է նշել ինտեգրված պարապմունքների կազմակերպման ձևերը, ինչպես նաև դրանց արդյունավետությունը՝ պարապմունքի բովանդակության մեջ ապահովելով միջառարկայական կապերը տարբեր մեթոդիկաներից:

Հետազոտական աշխատանքի այս թեման ընտրեցի, քանի որ ցանկանում էի ցույց տալ, թե որքան կարևոր և արդյունավետ է պարապմունքի այս տեսակը, երբ երեխան ինքնուրույն պետք է բացահայտումներ անի, ընդ որում օգտվելով միաժամանակ մի քանի ոլորտից:

Հետազոտությունը կատարվել է Ալափարս գյուղի մանկապարտեզում 2023թ.-ի նոյեմբերի 20-ից մինչև 30-ը: Իմ կողմից որպես հետազոտական առանցք ընտրվել է ավագ նախադպրոցական տարիքի 23 երեխա:

ԳԼՈՒԽ 1

ԻՆՉ Է ԻՆՏԵԳՐՈՒՄԸ

Ինտեգրված կրթությունը մանկավարժական գործընթացի կարևորագույն բնագավառներից մեկն է,որը կապված է նախկինում անհամեմատելի մասերի միավորման հետ: Ինտեգրման գործընթացի էությունը՝ համակարգի մեջ մտնող յուրաքանչյուր տարրի մեջ որակական փոփոխությունն է: Մանկավարժության ինտեգրման խնդիրները ուսումնասիրվում են տարբեր բնագավառներում՝ բազմաթիվ հետազոտողների աշխատանքներում: Վ. Վ. Կրաևսկու, Ա. Վ. Պետրովսկու, Ն. Ֆ. Թալինյանի ստեղծագործություններում հստակ երևում է այլ գիտությունների հետ մանկավարժության ինտեգրման խնդիրների կապը: Լի Նովիկովայի և Վ. Կ. Կարոլովսկու ստեղծագործություններում բացահայտվում են երեխայի վրա կրթական ազդեցությունների ինտեգրման խնդիրները: Ինտեգրման սկզբունքը ենթադրում է ուսուցման գործընթացի բոլոր բաղադրիչների համակարգի բոլոր տարրերի փոխկապակցում և համակարգերի միջև կապ: Ուսուցման կազմակերպման մեջ ինտեգրումը նկարագրվում է Ս. Մ. Գապենկովի և Գ. Ֆ. Ֆեդորեթսի գրվածքներում: Հետազոտողները ինտեգրումը հասկանում են մանկավարժական գործընթացի զարգացման կարևորագույն բնագավառներից մեկը, որը կապված է անհամեմատելի մասերի միավորման հետ:

1.1 Ինտեգրված ուսուցում

Որակյալ ուսուցում ապահովելու համար նախ և առաջ կարևոր է ճիշտ կազմակերպել ուսուցման գործընթացը: Այս դեպքում տեղին է նշել Մ. Վ. Ստեպանովի նկատառումը, ըստ որի կրթական գործընթացը պետք է այնպես կառուցել, որ նպաստի երեխաների մտածողության զարգացմանը,անհրաժեշտ գիտելիքների որոնմանն ու կիրառմանը:

Ինտեգրված ուսուցման մասին դեռ վաղուց իրենց կարծիքն են հայտնել մի շարք մանկավարժագետներ՝ Յ. Ա. Կոմենսկին,Յ. Հ. Պեստալոցցին, Վ. Սուխոմլինսկին, Ի. Պ. Պոդլասին: Ինտեգրված ուսուցումը պետք է լինի զարգացնող և բազմաբովանդակ: Ինչպես նշում է Ե. Ա. Եկժանովան. «Ինտեգրված ուսուցումը, հիմնվելով հատուկ և ընդհանուր կրթության սկզբունքների վրա,պետք է ունենա զարգացնող,դաստիարակող բնութագիր, որը ենթադրում է սովորողների բարոյական գաղափարների, վարքի համարժեք ձևերի մշակում՝ բոլոր մասնակիցների ներառմամբ կրթական գործընթացում »:

Ինտեգրված ուսուցումն ապահովում է երեխայի զարգացման մտավոր, սոցիալական, հուզական, ֆիզիկական և գեղագիտական ոլորտների համակողմանի զարգացումը՝ ընդ որում օգտվելով միաժամանակ տարբեր ոլորտներից: Կարևոր է նաև նպաստող միջավայր ստեղծելը, որտեղ բացառապես լարվածություն չկա: Պարապմունքների ժամանակ երեխան պետք է զգա մեծահասակների հոգատարությունն ու խնամքը: Այսպիսի մթնոլորտը նպաստում է երեխայի մտավոր և լեզվական ունակությունների զարգացմանը, երեխան ինքնավստահ է լինում և համարձակ փորձեր է անում նոր ստացած գիտելիքները կիրառելու համար:

Ժամանակակից մանկավարժական գրականության մեջ տարբերակվում են ինտեգրված ծրագրերի հետևյալ տեսակները

- Միջառարկայական
- Բազմառարկայական
- Անդրառարկայական

Այս ամենը իրար շաղկապում է մի թեմա, որն իր մեջ ներառում է մի քանի առարկա:Ինտեգրված ուսուցումը , ինչպես կանոն ունենում է մի քանի նպատակ: Գլխավոր նպատակին է առնչվում պարապմունքի բուն մասը և այն համարվում է առաջնային, իսկ մյուս նպատակները՝ երկրորդային: Ինչպես, օրինակ խոսքի զարգացման ինտեգրված պարապմունքի նպատակը կարող է լինել նկարների օգնությամբ պատմվածքի հորինելը,սակայն երեխան լրացուցիչ ծանոթանում է բնությանը, շրջապատող աշխարհին,

ձեռք է բերում որոշակի հմտություններ ապլիկացիայի ժամանակ, քայլքի և վազքի հմտություններ՝ ֆիզկուլտ դադարի ժամանակ:

1.2 Ինտեգրված պարապմունք

Ինտեգրված պարապմունքը, որպես դաստիարակի և երեխաների համատեղ գործունեության ձևերից մեկը, թույլ է տալիս լուծել կրթական տարբեր ոլորտի խնդիրներ միաժամանակ: Ինտեգրված պարապմունքների խնդիրը նախադպրոցականների համար հետևյալն է.

- շրջապատող աշխարհի մասին նպատակային գիտելիքների ձևավորումը
- հմտությունների և նոր ինֆորմացիայի ինքնուրույն ընկալման ձևավորումը
- արվեստի հետ շփումը, էսթետիկ ճաշակի զարգացումը
- ստեղծագործական կարողությունների զարգացումը

1.3 Ինտեգրված պարապմունքի պլանավորման մեթոդիկա

Ինտեգրված պարապմունք պլանավորելիս հարկ է նշել, որ ուսուցման այս ձևը ենթադրում է հատուկ պատրաստվածություն և՛ երեխաների, և՛ դաստիարակի կողմից: Դրան նախապատրաստվելիս կարևոր է իմանալ դրանց իրականացման պլանավորման և կազմակերպման հիմնական պահանջները: Դրանք են՝

- Բացահայտել գիտելիքների ոլորտները, որոնց ինտեգրումը նպատակահարմար է և կնպաստի երեխայի կողմից ուսումնասիրության օբյեկտի ամբողջական ըմբռնման ձևավորմանը
- Վերլուծել և ընտրել այս ոլորտներից այն բովանդակությունը որի ինտեգրումն ամենակարևորն է
- Հաշվի առնել նախադպրոցական տարիքի երեխաների ծրագրային պահանջներն ու տարիքային առանձնահատկությունները

- Սահմանել մեկ կամ մի քանի հիմնական ուղղություններ կրթական բովոնդակության ինտեգրման համար
- Վեր հանել ինտեգրված պարապմունքի կառուցման հիմնական սկզբունքը և պարապմունքի բուն նյութին համապատասխան բաշխել առաջադրանքները
- Մտածել զարգացնող առաջադրանքներ
- Կիրառել գործունեության տարբեր ձևեր (օրինակ՝ հեքիաթի բեմականացում, երաժշտական ձևավորում)
- Երեխաների հետ աշխատելիս օգտագործել արդյունավետ մեթոդներ և տեխնիկա (խնդրահարույց իրավիճակներ, տրամաբանական առաջադրանքներ, փորձարկումներ, մոդելավորում և այլն):

Ինտեգրված ուսուցման պլանավորման, կազմակերպման և անցկացման գործընթացում հաշվի առնել անհատական մոտեցումը:

Ինտեգրված պարապմունքի մեջ միավորումը տեղի է ունենում մի գործունեության տարրերի մյուսի մեջ ներթափանցմամբ: Նման գործունեության մեջ գրեթե անհնար է առանձնացնել գործունեության մի տեսակը մյուսից: Այստեղ մի գործողությունը փոխարինում է մյուսին:

Պարապմունքի ձևի ընտրությունը ըստ մեթոդների որոշում է դաստիարակը՝ ծրագրով նախատեսված թեմային համապատասխան: Ինտեգրված պարապմունքները կարող են ծառայել նաև որպես ամփոփիչ պարապմունք, որի ընթացքում դաստիարակը կիրառում է նոր մեթոդներ: Այսպիսի պարապմունքների ընթացքում երեխաները սովորում են աշխատել ինքնուրույն և այդ կերպ ձևավորվում են որոշակի հմտություններ և կարողություններ: Երեխաները սովորում են համարձակ արտահայտել իրենց կարծիքը տրված հարցերի շուրջ: Ինչպես նաև կարծիք հայտնել ընկերոջ կատարած աշխատանքի վերաբերյալ:

Ինտեգրված պարապմունքները հնարավորություն են տալիս լուծել մի շարք խնդիրներ, հասնել այնպիսի նպատակների, որոնք դժվար կլիներ իրականացնել

ավանդական պարապմունքների միջոցով: Ինտեգրված պարապմունքների կազմակերպման հիմքում ընկած են հետևյալ նպատակները.

- Ճանաչողական – սովորեցնել գտնել կապեր փաստերի, երևույթների, իրողությունների միջև, և անել եզրակացություններ
- Զարգացնող – զարգացնել վերլուծելու, համեմատելու և ամփոփելու կարողությունը
- Դաստիարակչական – առաջացնել սեր և հետաքրքրություն ինտեգրված ուսուցման հանդեպ:

Ինտեգրված պարապմունքներին երեխաները սիրով են մասնակցում, հեշտությամբ են յուրացնում ծավալուն նյութը:Կարևոր է նաև այն, որ ձեռք բերված գիտելիքները, կարողություններն ու հմտությունները կիրառվում են երեխաների կողմից ոչ միայն գործնականում՝ ավանդական ուսումնական իրողություններում, այլևս հնարավորություն են տալիս բացահայտել նրանց ստեղծագործական հնարավորությունները, նպաստում են մտավոր ունակությունների բացահայտմանը:

Ինտեգրված պարապմունքի անցկացումը կառուցվածքային համակարգ է, որը բաղկացած է հետևյալ փուլերից.

- Որոնողական
- Նախապատրաստական
- Հիմնական կամ կատարողական
- Ավարտական

Շատ կարևոր է ուշադրությաուն դարձնել այն տարածքի կահավորմանը, որտեղ պետք է անցկացվի ինտեգրված պարապմունքը, ինչպես նաև գործնական աշխատանքի կազմակերպման ձևերին, քանի որ այդ ամենը պետք է նպաստի պարապմունքի արդյունավետությունը:

Ինչ է տալիս ինտեգրված պարապմունքները դաստիարակին: Առաջին հերթին հոգեկան բավարարվածություն: Այն հետաքրքիր է երեխաների համար, հետաքրքրություն է արթնացնում պարապմունքների, երաժշտության և ընդհանրապես աշխատանքի

հանդեպ: Ինտեգրված ուսուցումը չի սահմանափակվում ոչ առարկաներով, ոչ երեխաների տարիքով, ոչ էլ թեմատիկայով: Այն ուղղակիորեն կախված է դաստիարակի անհատական հետաքրքրություններից՝ դարձնել պարապմունքներն ավելի տեղեկացված, հետաքրքիր, պարապմունքի ընթացքում ապահովել ստեղծագործական մթնոլորտ: Աշխատանքային փորձը կարող է օգտակար լինել ցանկացած դաստիարակի համար:

Պարապմունքների ինտեգրման համար անհրաժեշտ է, որ թեման կամ կերպարները լինեն նույն հարթության վրա: Եթե խոսքը պայծառ աշնան կամ ձմռան մասին է, ուրեմն ստեղծագործությունների ցանկը՝ ոտանավորները, երգերը, ունկնդրված երաժշտությունը, խաղերը, դիդակտիկ նյութերն ու պարագաները պետք է համապատասխանեն տվյալ տրամադրությանը: Ինտեգրված պարապմունքների շրջանակը լայն է, օրինակ բնության թեման, որը ոչ միայն ծանոթացնում է բնությանը, այլև նրա առանձին երևույթներին:

Ինտեգրված պարապմունքները ենթադրում են երեխաների շարժողական ակտիվությունը, ինչպես նաև նրանց հուզական, ինտելեկտուալ, սոցիալ-բարոյական առողջության համար բարենպաստ պայմանների ստեղծումը, նախադպրոցականի ստեղծագործական արդյունավետ գործունեությանը հասնելը ՝ նկարների, երգերի, փոքրիկ պատմությունների հորինում, խաղերի, նվագարաններով իմպրովիզացիաների միջոցով: Այսպիսով՝ ինտեգրված պարապմունքները ոչ միայն հարստացնում են երեխաների պատկերացումները շրջակա միջավայրի մասին, այլև նպաստում են երեխաների ստեղծագործական մտածողության զարգացմանը, ձևավորում են վառ, դրական հույզեր, ստեղծագործական համագործակցության գործընթացի միջոցով՝ մեծահասակների հետ շփումների ընթացքում: Նման պարապմունքները հրաշալի հնարավորություն են երեխաների ստեղծագործական ինքնարտահայտումը վերհանելու համար:

1.4 Ինտեգրված պարապմունքի կազմակերպումը տարատարիք խմբում

Տարատարիք խմբերում ինտեգրված պարապմունքի արդյունավետ կազմակերպման միջոցներն են.

- Պարապմունքների մեծ մասն անցկացնել ենթախմբերով՝ բաժանելով երեխաներին ըստ տարիքային խմբերի, այն ժամանակ երբ առաջին ենթախումբը պարապում է, մյուս ենթախմբին հնարավորություն է ընձեռնվում խաղալ ինքնուրույն
- Անհրաժեշտ է ստեղծել անվտանգ միջավայր՝ հաշվի առնելով տարբեր տարիքի երեխաների կարիքներն ու պահանջմունքները
- Պարապմունքի ժամանակ շատ կարևոր է ֆիզկուլտ դադարի, մատներով մարմնամարզության անցկացումը՝ երեխաների շարժունակության ապահովման նպատակով
- Առաջադրանքը տրվում է ոչ թե մեկ, այլ մի քանի երեխայի
- Դաստիարակը առաջարկում է գաղափարներ, որոնք երեխաների մոտ ի հայտ են բերում ինչ-որ մտքեր
- Առաջադրանք տրվում է այնպես որ ընդգծվի մասնակիցների ընդհանուր հաղորդակցությունը
- Այս սկզբունքով կազմակերպված աշխատանքը հնարավորություն է տալիս երեխաներին իրենց գործողությունները համեմատել այլ երեխաների գործողությունների հետ
- Դաստիարակի դերը կայանում է նրանում, որ նա երեխաների մոտ ստեղծում է խթանիչ իրավիճակ շրջապատող իրականության, աշխարհի ճանաչման մասին գիտելիքներ ձեռք բերելու համար
- Գիտելիքը պետք չէ պատրաստի մատուցել, այն լավ յուրացվում է, երբ դառնում է յուրաքանչյուր երեխայի համար անձնական փորձ
- Կերպարվեստային պարապմունքները անց են կացվում ենթախմբերով՝ հանձնարարականը պետք է տարբերվի ըստ բարդության աստիճանի
- Կարևոր է, որ յուրաքանչյուր երեխա ընդգրկվի կատարվող աշխատանքում

Գլուխ 2

Գործնական մաս

Մաթեմատիկայի,գեղարվեստական գրականության և ծեփի ինտեգրված պարապմունքի պլան կոնսպեկտ

Թեմա – Օգնեք փրկել «Գնդլիկ-Բոքոնիկին»

Տարիքային խումբ – ավագ(5-6 տարեկան)

Տևողությունը – 40 րոպե

Նպատակ – Սովորեցնել և ամրապնդել պարզագույն մաթեմատիկական հասկացությունները, սեր արթնացնել գեղարվեստական գրականության հանդեպ, սովորեցնել ծեփանյութից տարբեր չափի գնդեր պատրաստել:

Խնդիրները՝

Կրթական – Տալ պատկերացում լայն և նեղ հասկացությունների մասին, ամրապնդել մրգերի և բանջարեղենի, վայրի և ընտանի կենդանիների մասին ունեցած գիտելիքները, սովորեցնել առարկաները համեմատել ըստ քանակի, ամրապնդել երկրաչափական պատկերների մասին ունեցած գիտելիքները, տալ պատկերացում մեծ և փոքր հասկացությունների մասին:

Զարգացնող – Զարգացնել մտածողությունը, ուշադրությունը, հետաքրքրությունը, համեմատելու և չափելու, համագործակցելու կարողությունները:

Դաստիարակող – Դաստիարակել սեր,հարգանք միմյանց նկատմամբ,առաջացնել իրար օգնելու ցանկություն:

Անհրաժեշտ պարագաները – Հեքիաթին համապատասխան դիդակտիկ և դեկորային նյութեր, լայն և նեղ ճանապարհներ, մրգերի և բանջարեղենի, վայրի և ընտանի կենդանիների նկարներ, նապաստակների և եղևնիների նկարներ հավասար քանակով, երկրաչափական պատկերներ, արջերի ուրվագծեր, մեծ և փոքր տուփեր:

Ընթացքը՝

Խթանման փուլ

Երեխաներ այսօր առավոտյան մի փուչիկ թռավ և իջավ մեր խմբասենյակ: Փուչիկից մի ծրար էր կապված: Եկեք միասին կարդանք, թե ինչ է գրված նամակում:

Օ՛, հրավիրատոմս է. «Սիրով հրավիրում ենք Ալափարսի մանկապարտեզի ավագ խմբի սաներին ուղևորվել դեպի հեքիաթների աշխարհ»: Իսկ թե որ հեքիաթ ենք գնալու կգուշակեք հանելուկի միջոցով.

Խմորից ինձ գնդեցին,
Վառարանում եփեցին,
Պատուհանին դրեցին,
Գլորվեցի փախչեցի:

/Գնդիկ Բոքոնիկը/

Այո՛, դուք ճիշտ եք: Ուրեմն մենք ուղևորվում ենք դեպի «Գնդիկ Բոքոնիկի» հեքիաթային աշխարհ: Իսկ դուք սիրու՞մ եք այդ հեքիաթը: Հիշու՞մ եք այն: Դե ուրեմն ինձ ասացեք՝ ու՞մ հանդիպեց Գնդիկ Բոքոնիկը անտառում (նապաստակին, արջին, գայլին և աղվեսին):Իսկ ի՞նչ եղավ հեքիաթի վերջում (աղվեսը կերավ նրան): Մեր հեքիաթում մի փոքր այլ է, մենք պետք է օգնենք նրան փրկվել:

Իմաստի ընկալման փուլ

Գնդիկ–Բոքոնիկը տնից փախչելուց հետո գլորվում էր դեպի անտառ: Խնդրում եմ նայեք այս երկու ճանապարհներին, ձեր կարծիքով, ո՞ր ճանապարհով կգլորվի Գնդիկ Բոքոնիկը (լայն): Գլորվեց, գլորվեց Գնդիկ Բոքոնիկը լայն ճանապարհով և հանդիպեց նապաստակին . «Գնդիկ Բոքոնիկ ես քեզ կուտեմ »: Երեխաներ Գնդիկ Բոքոնիկը խնդրում է նապաստակին բաց թողնել իրեն, իսկ նապաստակը դրա փոխարեն առաջադրանք է տալիս Գնդիկ Բոքոնիկին: Մենք պետք է օգնենք նրան կատարել առաջադրանքը: Իսկ առաջադրանքն այսպիսին է՝ նապաստակը իր այգում շատ մրգեր և բանջարեղեն է աճեցրել, բայց դրանք բոլորը խառնվել են իրար և նապաստակը չի կարողանում դրանք

առանձնացնել: Եկեք մրգերը հավաքենք զամբյուղի մեջ, իսկ բանջարեղենը՝ կաթսայի: Կեցցե՛ք, Գնդիկ Բոքոնիկը ազատ է: Նա շարունակեց իր ճանապարհը և այս անգամ հանդիպեց գայլին: Կարո՞ղ եք ասել Գնդիկ Բոքոնիկը անտառում ո՞րտեղ կարող է թաքնվել գայլից (եղևնիների ետևում): Սեղանին դրված ձեր ափսեների մեջ կան եղևնիների և նապաստակների նկարներ: Եկե՛ք հաշվենք քանի եղևնի կա և շարենք սեղանին (4),իսկ հիմա հաշվեք նապաստակների քանակը(4) և թաքցրեք եղևնիների ետևում: Եթե և՛ նապաստակները, և՛ եղևնիները 4-ն են, ի՞նչ կարող ենք ասել նրանց մասին,ինչպիսի՞ն են նրանք ըստ քանակի (հավասար,կամ նույն քանակի):

Երեխանե՛ր բայց գայլը ևս մեկ առաջադրանք ունի ձեզ համար, նա խառնել է վայրի և ընտանի կենդանիներին, մենք պետք է խմբավորենք նրանց: Որտե՞ղ են ապրում վայրի կենդանիները(անտառում), իսկ ընտանի կենդանիները (մեր տան բակում): Դե ուրեմն եկեք տնակի մոտ դնենք ընտանի կենդանիների նկարները, իսկ անտառի մոտ վայրի կենդանիներինը:

Ֆիզկուլտ դադար

Եկեք շրջան կազմենք և պտտվենք Գնդիկ Բոքոնիկի նման, իսկ հիմա նապաստակի նման ցատկոտենք,հիմա արջի նման քայլենք:

Լավ փոքրիկներս եկեք շարունակենք: Մեր Գնդիկ Բոքոնիկը շարունակեց ճանապարհը և հանդիպեց արջին: Գիտե՞ք, արջը մի պարկ ուսին շրջում էր անտառում, պարկի մեջ ինչ-որ պատկերներ կան:Եկեք օգնենք նրան հասկանալ թե ինչ պատկերներ են դրանք՝ (դաստիարակը ցույց է տալիս երկրաչափական պատկերները և երեխաները անվանում են դրանք):

Արջը նույնպես առաջադրանք ունի մեզ համար: Իմ սեղանին արջի ուրվագծեր կան, որոնց փորիկի հատվածում անցքեր կան, մենք պետք է ընտրենք համապատասխան պատկերը և լրացնենք այդ անցքեր: Շատ ապրեք իմ խելացիներ, արջը նույնպես բաց թողեց Գնդիկ Բոքոնիկին:

Մեր Գնդիկ Բոքոնիկը շարունակելով ճանապարհը հանդիպեց աղվեսին: Աղվեսը չի ցանկանում բաց թողնել Գնդիկ Բոքոնիկին, քանի որ շատ սոված է ու մենակ: Եկե՛ք դիմենք

խորամանկության՝ խմորից Գնդիկ Բոքոնիկներ ծեփենք և տանք աղվեսին,նա կկարծի թե շա՛տ Գնդիկ Բոքոնիկներ ունի և բաց կթողնի մեր Գնդիկ Բոքոնիկին:

Նայեք խնդրում եմ այս տուփերին,ինչպիսի՞ն են դրանք(մեծ և փոքր):Եկեք ծեփենք մեծ և փոքր բոքոնիկներ՝ մեծերը կդնենք մեծ տուփի մեջ, փոքրերը փոքր տուփի մեջ:

Կեցցե՛ք, դուք բոլոր առաջադրանքները հաջողությամբ կատարեցիք և աղվեսը բաց թողեց Գնդիկ Բոքոնիկին: Գլորվեց նա գլորվեց, և վերադարձավ տուն՝ տատիկի և պապիկի մոտ:

Կշռադատման փուլ

Ձեզ դուր եկա՞վ հեքիաթը:

Ո՞ր հեքիաթին էինք հյուր գնացել:

Ու՞մ օգնեցինք, ի՞նչ առաջադրանքներ կատարեցինք:

Գնդիկ Բոքոնիկը վերադարձավ տուն,որովհետև մենք բոլորս միասին կարողացանք ճիշտ կատարել բոլոր առաջադրանքները:

Այսպիսով, ստացվեց շատ հետաքրքիր և ուսուցողական պարապմունք:Պարապմունքի ընթացքում կիրառեցի ինտերակտիվ մեթոդներ՝ մտագրոհ, ենթախմբերի բաժանում, հարցեր և հարցադրումներ: Երեխաները սիրով և

հետաքրքրությամբ էին լսում հեքիաթը, մեծ ոգևորությամբ կատարում առաջադրանքները՝ որոնց ընթացքում իրականացնում էինք մեր առջև դրված նպատակները:

Փաստորեն, ինտեգրելով գեղարվեստական գրականության, մաթեմատիկայի և ծեփի պարապմունքները, հասանք մեր պարապմունքի նպատակին:

Դիտարկում

Պարապմունքն անցավ ակտիվ մթնոլորտում: Այն կազմակերպված էր բավական հետաքրքիր և հագեցված դիդակտիկ նյութերով՝ ժամանակակից պահանջներին համապատասխան:

Ինտեգրված պարապմունքի ընթացքում սահուն համակցված էր հեքիաթը, մաթեմատիկան, ծեփը, տրամաբանությունը և ուրախ ֆիզկուլտ դադարները: Տարբեր մեթոդների միջև կապերի հետաքրքիր բացահայտումը նպաստեց առարկաների և երևույթների ուսումնասիրությանը:

Հետագա աշխատանքների ընթացքում ցանկալի է, որ դաստիարակներն ավելի հաճախակի բազմաբնույթ, բովանդակալից և մոտիվացնող ինտեգրված պարապմունքներ անցկացնեն, որը թույլ է տալիս պահանջվող նյութը լիարժեք՝ տարբեր իրավիճակներում և տարբեր կողմերից ընկալել, ամրապնդելով գիտելիքները, կարողություններն ու հմտությունները:

Պարապմունքի ավարտին եկա այն եզրահանգման, որ դաստիարակը լիարժեք կատարեց իր առջև դրված խնդիրները:

Տնօրեն՝ Մարինա Աթալյան

Դիտարկում

Դաստիարակը պարապմունքի ընթացքում հասավ իր առջև դրված նպատակին: Նա ինտեգրել էր մաթեմատիկայի, գեղարվեստական գրականության և ծեփի պարապմունքները ուսուցման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով: Պարապմունքի թեման բխում էր ծրագրային նյութի պահանջներից: Խնդիրները հստակ

ձևակերպված էին: Պարապմունքի տարբեր բաժիններ տրամաբանորեն կապված էին միմյանց հետ: Դաստիարակը պարապմունքը սկսեց «Գնդիկ Բոքոնիկը» հեքիաթի բեմականացմամբ: Նա այնպես էր կահավորել խումբը տարբեր դիդակտիկ նյութերով, կարծես մենք բոլորս անտառում գտնվեինք: Հեքիաթի հերոսին օգնելու համար երեխաները մի շարք մաթեմատիկական խնդիրներ պիտի լուծեին: Նրանք կարողացան խմբավորել առարկաները ըստ իրենց նշանակության, հավասարեցնել դրանց թիվը ըստ քանակի, լուծեցին պարզ խնդիրներ, ամրապնդեցին երկրաչափական պատկերների իմացությունը ըստ հատկանիշների: Երևում էր, որ երեխաների մոտ ձևավորված է ճանաչողական և մոտիվացիոն կարողունակությունները, նրանք ունակ էին պատճառահետևանքային կապեր տեսնել իրադարձությունների միջև: Դրսևորում էին ակտիվություն, հետաքրքրասիրություն առարկաների և երևույթների հանդեպ: Ինձ դուր եկավ դաստիարակի ենթախմբերով աշխատանքը: Երեխաները միմյանց հանդեպ ցուցաբերում էին հարգանք, հոգատարություն, փոխօգնություն, պահպանում բարեվարքության կանոնները:

Երեխաները առավել ակտիվ էին ծեփի պարապմունքի ժամանակ, մեծ և փոքր արկղերը այնպես էին գրավել նրանց, որ ամեն մեկը ջանում էր ավելի գեղեցիկ բոքոնիկ պատրաստել:

Բավականին տրամաբանորեն կապակցված նախադասություններով երեխաները կարողանում էին պատասխանել դաստիարակի հարցերին:

Մանկապարտեզում ինտեգրված պարապմունքների անցկացումը շատ եմ կարևորում, քանի որ այն պահանջում է ինքնուրույն մտածողություն, համագործակցություն, կարգապահություն: Ինտեգրված պարապմունքները օգնում են տվյալ թեմայի յուրացմանը դրսևորելով ավելի մեծ հետաքրքրություն, գեղեցիկն ու լավը գնահատելու ցանկություն:

Մեթոդիստ՝ Նարինե Հովհաննիսյան

Եզրակացություն

Ուսումնասիրելով ինտեգրված պարապմունքների կազմակերպումը կարողունակահեն կրթական մոտեցման համատեքստում թեման, կարողացա փաստել ինտեգրված պարապմունքների արդյունավետությունը: Այն կայանում է նրանում, որ բոլոր երեխաները դառնում են գործուն, յուրաքանչյուրը զբաղվում է իր առանձնահատկություններին համապատասխան, իր ցանկություններին հարիր աշխատանքով: Այստեղ տարբերվում է մի երեխայի գերակայությունը մյուսների նկատմամբ:

Ինտեգրված պարապմունքները ուղղված են նպաստել երեխաների ինքնուրույնությանը, դրանք հնարավորություն են տալիս համագործակցել միմյանց հետ և ջերմ հարաբերություններ հաստատել:

Հետազոտական աշխատանքի հիմքում ընկած է նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը:

Գրականության ցանկ

Ինտեգրված կրթություն Վիքիպեդիա

«Ինտեգրումը կրթական գործընթացում» - Փնջոյան Տ. 2018 թ.

«Ուսումնամեթոդական ձեռնարկ մանկապարտեզի համար» - Հ. Միտոյան, Լ. Սմբատյան Երևան 2010 թ.

«Ինտեգրված երաժշտական պարապմունքները մանկապարտեզում» Կարինե Ղազարյան Մարի հրատարակչություն

Томашевская Л. В., Герц Е. Ю., Андрющенкова Е. В. Интегрированные занятия с детьми в период адаптации к детскому саду. Учебно-методическое пособие для педагогов ДОУ и родителей. - СПб.: «Издательство Детство-Пресс», 2012. - 96 с.